

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԷՊԵՐԻ ԼԵԶՈՒԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համառոտագիր

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Ծերենց վիպասանի լեզուաոճական առանձնայատկությունները պատշաճ խորութեամբ չեն ուսումնասիրուել, ներկայ հրապարակմամբ ջանացել ենք ուսումնասիրել նրա «Թորոս Լեւոնի», «Երկունք Թ դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերի լեզուն, դրանց առանձնայատկություններն ու արտայայտման եղանակները, որոնք ստեղծում են գեղարուեստական լեզու եւ անհատական ոճ: Քանի որ երեք վէպերն էլ ունեն լեզուական ընդհանրություններ, մենք այդ ստեղծագործությունները քննում ենք ոչ թէ առանձին-առանձին, այլ ընդհանուր, միասնական կերպով:

Ծերենցի վէպերի լեզուն ունի յուզական երանգաւորում, գունագեղ է, կոլորիտային եւ արտայայտիչ: Նա իւրաքանչիւր բառին, նախադասութեանը հաղորդել է համապատասխան գոյն ու երանգ, իր հերոսների անձնագոյ գործունէութիւնը ներկայացրել լեզուական երանգաւորումով, գեղարուեստական հարուստ միջոցներով: Հեղինակի նկարագրած երեւոյթների վեհութիւնն ու վիթխարի նշանակութիւնն արտայայտուում են նրա համեմատութիւնների, փոփոխութիւնների եւ մակդիրների վարպետ ընտրութեան ու օգտագործման միջոցով: Իր ստեղծագործություններում գլխաւոր կերպարներին բնորոշելիս Ծերենցն այնպիսի խօսքերով է դրուատում նրանց հայրենանուէր գործունէութիւնը, որ ընթերցողն առանց երկմտելու կարողանում է պատկերացում կազմել բնութագրուող անձի մասին: Տարբեր պատմաշրջաններ ընդգրկող նրա վէպերը լեզուա-արտայայտչական կառուցուածքի տեսակէտից ունեն նկատելի ընդհանրություններ. նման են թէ՛ թեմատիկայով, թէ՛ շօշափած գաղափարներով, թէ՛ լեզուի եւ ոճաւորման արուեստի օգտագործած հետաքրքիր հնարներով եւ թէ՛ տիպականացման արուեստի բնորոշ կողմերով: Ծերենցն իր ստեղծագործական մտայնողացումներով, լեզուական կարողություններով գեղարուեստօրէն վերամարմնաւորել է պատմական դարաշրջանում տեղի ունեցող դէպքերն ու իրադրությունները, ստեղծել բազմաթիւ գեղարուեստական պատկերներ, խօսքի զանազան միջոցներով նկարագրած երեւոյթները հասցրել ընթերցողներին՝ նրանց երեւակայութեան մէջ առաջացնելով պատմականութեան պատրանք: Նրա ստեղծած պատկերները չափազանց հետաքրքիր եւ նպատակասլաց են, դրանք իրենց պատկերացման մէջ իմաստաւորում են բնութագրուող դարաշրջանը:

Վիպասանը քաջածանօթ է եղել հայ հին եւ նոր գրական լեզուների արտայայտչամիջոցներին, բարբառներին, դարձուածքներին եւ օգտագործել է այդ լեզուների հարուստ բառապաշարը, երբեմն ինքն էլ ածանցման եւ բառաբարդման միջոցով ստեղծել է նոր բառեր, տուել այդ բառերին նոր իմաստներ: Ծերենցը վարպետօրէն կարողացել է կիրառել պատմական դարաշրջանի հասարակական կեանքի համար էական, բնորոշ, միջավայրին համապատասխան լեզուաոճական արտայայտչաձեւեր, գործածել

է գրաբարեան բառեր, դարձուածքներ, արխայիզմներ: Ճիշդ է՝ գրողի վէպերում կան գրաբարեան այնպիսի բառեր ու արտայայտութիւններ, որոնք էական նշանակութիւն ունենալու հետ միասին ունեն նաեւ նշանակալից իմաստ՝ ընթերցողի երեւակայութեան մէջ պատմականութեան պատրանք առաջացնելու առումով, բայց եւ այնպէս վիպասանի երկերում այնքան շատ են անհարկի գործածուած գրաբարեան բառերն ու ոճական արտայայտութիւնները, պատմիչների երկերից թափանցուած ամբողջական հատուածներն ու նախադասութիւնները, որ իջեցնում են գրողի պատմական երկերի լեզուական արժէքը. աւելին՝ ընթերցող լայն շրջանների համար նրա վէպերը դարձնում են դժուարընթեռնելի եւ դժուարամարս:

Մերենցի բոլոր վէպերում ցայտուն երեւում է, որ նա քաջածանօթ է եղել եկեղեցական բոլոր արարողութիւններին, աղօթքներին, հոգեւորականներին դիմելու ձեւերին:

Ուսումնասիրութիւնը գիտական եւ տեսական ընդհանրացում է Մերենցի վէպերի լեզուաոճական առանձնայատկութիւնների մասին, որը կը հետաքրքրի ոճաբանութեամբ զբաղողներին եւ բանասէրներին:

Մտաք

Որեւէ գրողի լեզուն եւ ոճն ուսումնասիրելիս առաջին հերթին նկատի պէտք է ունենալ նրա ստեղծագործութեան առանձնայատուկ եւ ինքնատիպ կողմերը՝ արտայայտած գաղափարները, արծարծած խնդիրները, նախընտրած թեմայի ու սիւժէի ստեղծման հիմնական սկզբունքները, ստեղծագործութեան գեղարուեստական առանձնայատկութիւնները եւ այլն: Նման ուսումնասիրութիւնների մէջ «լեզու եւ ոճ» հասկացութիւնները կողք կողքի պարտադիր զուգահեռում են, քանի որ դրանք գրողի անհատականութիւնը դրսեւորող, իրար հետ անբաժանելիօրէն կապուած երկու կարեւոր գործօններ են: Ինչպէս նկատում է Լ. Եզեկեանը՝ «գեղարուեստական երկի լեզուի քննութիւնն ի վերջոյ յանգեցնում է նրա ոճի ուսումնասիրութեանը, քանի որ ամէն մի գրող որքան ինքնատիպ է իր մտածողութեամբ ու լեզուով, նոյնքան անհատական է իր ոճով, որով էլ հէնց ամէնից առաջ տարբերում է միւսներից»¹:

Գրողի ոճի ինքնատիպութիւնն արտայայտւում է նրա ստեղծագործութիւնների միջոցով. թէ տուեալ գրողը կեանքի որ բնագաւառների վրայ է բեւեռել իր ուշադրութիւնը՝ պատմական, թէ՛ արդիական, ինչպիսի՞ հարցեր է շօշափել, ի՞նչ խնդիրներ է արծարծել:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Մերենց վիպասանի լեզուաոճական առանձնայատկութիւնները պատշաճ խորութեամբ չեն ուսումնասիրուել, ներկայ հրապարակմամբ ջանացել ենք ուսումնասիրել նրա «Թորոս Լեւոնի», «Նրկունք Թ՝ դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերի լեզուն, դրանց առանձնայատկութիւններն ու արտայայտման եղանակները, որոնք ստեղծում են գեղարուեստական լեզու եւ անհատական ոճ:

Մերենցն իր վէպերում գեղարուեստօրէն վերարտադրել է պատմական հեռաւոր անցեալը, ցոյց տուել հայ ժողովրդի կեանքի ճշմարիտ պատկերը, ստեղծել բազմաթիւ նորանոր դրուագներ, տուել հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող դասակար-

¹ Լ. Կ. Եզեկեան, Գրական աշխարհաբար եւ արեւելահայ պատմավէպի լեզուն, Երեւան, ԵՊՀ հրատ., 1990, էջ 263:

գային յարաբերությունների ճշմարտացի նկարագրությունը: Գրողի ոճի իւրայատկությունը դրսևորում է նաեւ կերպարակերտման արուեստի մէջ:

Ծերենցն իր ստեղծագործություններում գլխաւոր կերպարներին բնորոշելիս այնպիսի խօսքերով է դրուատում նրանց հայրենանուէր գործունէությունը, որ ընթերցողն առանց երկմտելու կարողանում է պատկերացում կազմել բնութագրուող անձի մասին: Նրա հերոսները հանդէս են բերուել իբրեւ պետական եւ քաղաքական խոշոր գործիչներ, դիւանագէտներ, որոնք հարեւան պետությունների եւ կամ հասարակական տարբեր խւերի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելիս խօսել են իրենց յատուկ ոճով ու պատշաճ լեզուով:

Բայց ի՞նչ ենք հասկանում լեզու եւ ոճ ասելով: Կարելի՞ է արդեօք այդ երկու հասկացությունները նոյնացնել իրար: Ի հարկէ, ո՛չ:

Ինչպէս նկատում է գրականագէտ Զ. Աւետիսեանը. «Լեզուն գրողի համար այն նիւթն է, միջոցը, որից եւ որով արարում է գեղարուեստական ստեղծագործությունը, իսկ ոճը հեղինակի գեղարուեստական մտածողութեան դրսևորումն է իր անկրկնելիութեան մէջ»²:

Գրողի ոճն անհատականացուած երեւոյթ է. ամէն գրող ունի իր ինքնատիպ ոճը, ստեղծագործությունները շարադրում է այնպիսի ոճով, որն օրինաչափ է միայն իրեն, իր կիրառած ոճական միջոցներով նա միանգամայն տարբերում է միեւնոյն լեզուով ստեղծագործող միւս հեղինակներից:

Մինչդեռ լեզուն աւելի ընդհանրացած հասկացություն է: Տարիների ընթացքում հայոց լեզուի բառային կազմը եւ քերականական կառուցուածքն աստիճանաբար փոփոխութեան է ենթարկուել, այն մշակուել եւ հարթուել է, համալրուել նորանոր բառերով, կազմել մի ընդհանուր ամբողջություն, որով ստեղծագործել են մեր գրողները՝ կիրառելով իրենց ստեղծագործական խառնուածքին, մտածելակերպին եւ աշխարհայեացքին համապատասխան ոճ: Լեզուի եւ ոճի տարբերությունը հետեւեալ կերպ է բնորոշել Ալ. Շիրուանզադէն. «Լեզուն ընդհանուր երեւոյթ է, ոճը՝ մասնաւոր: Լեզուն կազմւում է ամբողջ ազգի հոգեկան, մտաւոր, պատմական եւ ֆիզիոլոգիական առանձնայատկությունների ամբողջությունից», այլ կերպ ասած, «ոճը ինքը հեղինակն է, լեզուն ինքը ազգն է»³: Իսկ Ծերենցը ոճի մասին գրում է. «Ոճը մտածութեան արտայայտութեան արտաքին ձեւ է, որը զգալի կ'ընէ գաղափարները կամ զգացմունքները, որ ծածկեալ էին ի մեզ»: «Ոճը կարգն է, որ պէտք է դնել մտածութեան մէջ: Երբ նոքա լաւ կապուին, սեղմուեն իրերոց, ոճը կը լինի հզօր, կորովի եւ համառօտ: Իսկ ընդհակառակն ծանր եւ դանդաղ բառերն իրար յաջորդեն, ինչչափ շքեղ լինեն, ոճը կը լինի ճապաղ, թոյլ եւ գետնաքարշ»⁴:

Ասել է թէ՛ Ծերենցը ոճը համարում է գրողի ստեղծագործութեան գաղափարական բովանդակութեան եւ գեղարուեստական առանձնայատկությունների արտայայտման ձեւ: Որքան սերտ լինի նրանց միութիւնը, այնքան աւելի պարզ եւ յստակ կը լինի գրողի ոճը. «Կան այնպիսիները, որոնք ճիշդ կը մտածեն, բայց ճշդութեամբ չեն արտայայտեր մտքերը»: «Գեղեցիկ պատկերները, իրաւացիօրէն նկատում է Ռ. Նանումեանը, չեն կարողանում ծառայեցնել իրենց նպատակին: Գեղարուեստական պատկե-

² Տէ՛ս Զ. Աւետիսեան, Գրականութեան տեսութիւն, Երեւան, «Նաիրի» հրատ., 1998, էջ 158:

³ Ալ. Շիրուանզադէ, Երկերի լիակատար ժողովածոյ, հ. 9, Հայպետհրատ, 1955, էջ 186-187:

⁴ ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, № 11:

րը ճիշդ արտայայտելու համար կարելու նշանակություն ունի լեզուն, նրանով միայն կարելի է որոշել գրողի գեղարուեստական մտածողության արտայայտչականության չափը»⁵:

Իւրաքանչիւր գրողի ստեղծագործութիւն ուսումնասիրելիս պէտք է նկատի ունենալ, թէ տուեալ գրողն իր երկում արտայայտչական ինչպիսի միջոցներ է կիրառել, գեղարուեստական ինչպիսի ձեւեր է օգտագործել դէպքերն ու իրադրութիւնները պատկերաւոր լեզուով արտայայտելու համար եւ, որ ամենակարեւորն է, գեղարուեստական ինչ մեթոտով է ստեղծագործել: Սովորաբար ռոմանթիկ գրողների երկերում հանդիպում ենք այնպիսի երեւոյթների, որոնք յուզում են ընթերցողին, ձգտում առաջացնում նրանց հոգիներում՝ տեսնելու եւ ընդօրինակելու լաւը, գեղեցիկը, վեհը: Ռոմանթիկների ստեղծագործութիւնները հարուստ են համեմատութիւններով, փոխառութիւններով եւ մակդիրներով, նրանց լեզուաոճական արտայայտութիւնների մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում խօսքի երաժշտականութիւնը:

Ինչպէս ռեալիստ, այնպէս էլ ռոմանթիկ գրողն իր ստեղծագործութիւնները հեղինակելիս օգտուում է ժողովրդական լեզուի հարուստ գանձարանից, վերցնում է այնտեղից այն լաւագոյնը, որը համապատասխանում է իր ստեղծագործական խառնուածքին եւ գաղափարական նպատակադրմանը: Գրողը ժողովրդական լեզուից վերցնում է այնպիսի ձեւեր, ընտրում այնպիսի բառեր, որոնց գեղարուեստական մշակման ենթարկելով, ձեւաւորում, յղկում, գեղեցկացնում է դրանք եւ նոր կիրառում իր ստեղծագործութիւնների մէջ՝ հարստացնելով եւ ճոխացնելով այն լեզուն, որով ստեղծագործում է ինքը: Ժողովրդական լեզուի արտայայտչամիջոցների օգտագործմանն առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել դասական գրողները. «Խօսքեր ու ձեւեր կան, որ իրենց մէջ ամբողջ պատմութիւններ են պարունակում,- գրել է Յովհ. Թումանեանը,- էդ տեսակ խօսքերը միայն հանճարները կարող են գրել, մին էլ ժողովուրդները, որ հազար-հազար աչքերով, հազար-հազար ականջներով, հազար-հազար խելքերով երկար դարերի ընթացքում նայում, լսում, քննում ու դատում են կեանքը ու վերջը հանում մի կարճ եզրակացութիւն, իրենց որոշումը մի բացականչութիւնով, մի ածականով կամ մի դարձուածքով»⁶: Գրականութեան լեզուն եւ ոճը կենդանի պահելու համար Ամենայն հայոց բանաստեղծը յենուել է ժողովրդական լեզուի հէնց այդ խօսքերի ու ձեւերի վերայ:

Պատմական կոլորիտ ստեղծելու համար Մերենցն իր վէպերում կիրառել է գեղարուեստական բազմաթիւ միջոցներ, որոնցից ամենանշանակալիցը նրա ստեղծագործութիւնների լեզուն է: Երբ հանգամանօրէն ուսումնասիրում ենք նրա վէպերը, տեսնում ենք, որ վիպասանը քաջածանօթ է եղել հայ հին եւ նոր գրական լեզուների արտայայտչամիջոցներին, բարբառներին, դարձուածքներին: Նա օգտագործել է այդ լեզուների հարուստ բառապաշարը, երբեմն ինքն էլ ածանցման եւ բառաբարդման միջոցով ստեղծել է նոր բառեր, տուել այդ բառերին նոր իմաստներ: Մերենցը վարպետօրէն կարողացել է կիրառել պատմական դարաշրջանի հասարակական կեանքի համար էական, բնորոշ, միջավայրին համապատասխան լեզուաոճական արտայայտչաձեւեր: Հայ պատմավիպասանների (Մերենց, Րաֆֆի, Մուրացան, Ստ. Զօրեան, Դ. Դեմիրճեան) ստեղծագործութիւնների խորագնին ուսումնասիրումը ցոյց է տալիս, որ վերոյիշեալ արձակագիրները, իրենց երկասիրութիւններում օգտագործելով ժողովրդ-

⁵ Ռ. Նանուեան, Մերենց, Կեանք եւ գործը, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ. 1986, էջ 147:

⁶ Французские писатели о литературе, Москва, 1978, Ст. 398.

դական լեզուի ընձեռած հարուստ միջոցները, պատմական դարաշրջանի ռեալիստական վերարտադրությունը տուել են գրական լեզուի, գրաբարի, բարբառների եւ օտար լեզուներից վերցրած բառերի հմուտ օգտագործման միջոցով՝ նպաստելով հայոց գեղարուեստական գրականության եւ գրական լեզուի զարգացման մեծ գործին:

Ծերենցի՝ տարբեր պատմաշրջաններ ընդգրկող վէպերը լեզուա-արտայայտչական կառուցուածքի տեսակէտից ունեն նկատելի ընդհանրություններ. նման են թէ՛ թեմատիկայով, թէ՛ շօշափած գաղափարներով, թէ՛ լեզուի եւ ռեալիզմի արուեստի օգտագործած հետաքրքիր հնարներով եւ թէ՛ տիպականացման արուեստի բնորոշ կողմերով: Նկատի ունենալով Ծերենցի վէպերի լեզուական ընդհանրությունները՝ մենք այդ ստեղծագործությունները քննում ենք ոչ թէ առանձին-առանձին, այլ ընդհանուր, միասնական կերպով: Ծերենցի վէպերի լեզուն ունի յուզական երանգաւորում, գունագեղ է, կոլորիտային եւ արտայայտիչ: Նա իւրաքանչիւր բառին, նախադասութեանը հաղորդել է համապատասխան գոյն ու երանգ, իր հերոսների անձնագոյն գործունէութիւնը ներկայացրել լեզուական երանգաւորումով, գեղարուեստական հարուստ միջոցներով:

Հեղինակի նկարագրած երեւոյթների վեհութիւնն ու վիթխարի նշանակութիւնն արտայայտուում են նրա համեմատութիւնների, փոփոխութիւնների եւ մակդիրների վարպետ ընտրութեան ու օգտագործման միջոցով: Ծերենցի կիրառած համեմատութիւններն ու փոխաբերութիւններն արտայայտիչ են, դիպուկ. դրանք հեղինակի խօսքի զանազան հնարներով ստեղծուած այնպիսի լեզուա-արտայայտչական միջոցներ են, որ նկարագրող առարկան կամ երեւոյթը դարձնում են պարզ ու որոշակի, որն անմիջապէս հասցւում է ընթերցողին՝ վերջինիս մօտ առաջացնելով զգայական ընկալում: Ծերենցն իր գլխաւոր գործող անձերի քաջութիւնն ու անվեհերութիւնը շեշտակի եւ դիպուկ կերպով բնորոշելու համար նրանց համեմատում է զանազան կենդանիների հետ: Օրինակ՝ «Խեղճ երիտասարդ մը իրօք առիւծ էր, կորիւն, առիւծու,- ասում է Թորոս իշխանը Բաբգէն հայրիկին,- իմ եղբայրս, իմ Ռուբէնս, ճիշդ այսօրուայ տարիքս ունէր, առիւծի ուժ, առիւծի սիրտ ունէր» («Թորոս Լեւոնի», էջ 14)⁷: «Ամէն մէկը մէյմէկ ցուլ դարձան, ուժովացան, գնացին ամէն տեղ առին» (նոյն տեղում, էջ 19): «Վերջը Լեւոն Կիլիկիոյ ազատարարն եւ առիւծն եղաւ» (նոյն տեղում, էջ 22): «Բաւական է, որ սա ինկածներուն մէջ ան անպիտան մեծաբանն ալ գտնուի՝ որ չէր հաւատար թէ, որ առիւծու կորիւնն միշտ առիւծ է» (նոյն տեղում, էջ 48): «Աղուէ՛ս, կա՛ց,- ըսի,- առիւծին ձագը տեսա՛ր» (նոյն տեղում, էջ 51): «Ձախ կողմը սիւնեցիք առիւծի պէս կը պատերազմէին» («Երկունք», էջ 338): «Սասնոյ լեռանց գայլը», «Սասնոյ լեռանց առիւծը» տեսանք կ'ըսէին (նոյն տեղում, էջ 379):

Ինչպէս տեսնում ենք, վերոբերեալ բոլոր օրինակներում հեղինակն իր հերոսներին համեմատում է առիւծի, կորիւնի, գայլի՝ այդ ամենաուժեղ կենդանիների հետ՝ աւելի պարզ եւ որոշակի ընդգծելու համար կոնկրէտ համեմատուող անձի ուժն ու հզօրութիւնը:

Ծերենցի վէպերն ուսումնասիրելիս տեսնում ենք, թէ գրողը որքան կրքոտ ու այրող ատելութեամբ էր լցուած հայ նախարարների եւ իշխանների վարած հակաժողովրդական, դաւաճանական գործունէութեան նկատմամբ, թէ ինչպէս հոգու ամբողջ ուժով նզովում էր նրանց՝ բացայայտելով նրանց արարքների անմարդկային էությունը: Զափազանց բնորոշ եւ տիպական են նախարարներին բնութագրող հետեւեալ համե-

⁷ Ծերենց, Երկեր, Երեսան, Հայպետհրատ, 1957: Այսուհետ սոյն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերով:

մատուցիչները. «Մի՞թե իմ պապերս, Ռուբեն, Կոստանդին, հօրեղբայրս Թորոս եւ հայրս Լեւոն, թէ որ ուզէին, թէ որ խնդրէին յունական արծույն սոքտած թելերուն տակ մտնել լաւբրոնական Օշիններու, Հեթումներու պէս ուրանալով հայութեան իրաւունքը, հայրենեաց եւ ազգութեան սէրը» («Թորոս Լեւոնի», էջ 15): Կամ «Ինձ անկի սիրելի է այդ անարգ, մոլի եւ անպիտան նախարարաց գլուխը կործանել իրենց գահոյքը՝ այդ դարաւոր քաղաքապետան վիշապը, որ նախարարութիւն կ'անուանեն, ջնջել, անհետ ընել, որ Հայաստան գլուխ մը միայն ունենայ եւ ժողովուրդ մը եւ լինի մի հօտ եւ մի հովիւ» («Երկունք», էջ 372): Երկու դէպքում էլ հեղինակը խիստ քննադատութեան է ենթարկում «մոլի» եւ «անպիտան» նախարարներին՝ համարելով նրանց «քաղաքապետան վիշապ», այստեղ բացայայտ կերպով զգացում է հեղինակի արհամարհանքն ու հակակրանքը այդ դասի նկատմամբ:

Նախարարներին նկարագրող համեմատութիւններից բացի՝ Ծերենցի վէպերում կան նաեւ հոգեւորականութեանը բնութագրող այնպիսի համեմատութիւններ, որոնք ընդգծում են նրանց տգիտութիւնն ու ընչաքաղցութիւնը, օտարի առաջ սողալու նրանց յատկութիւնը, հարստութիւն դիզելու մոլուցքը: Այսպէս, օրինակ՝ «նայէ տէրտէրներուն աչքին, դժոխքի ճրագ կը նմանի, գիտես թէ սատանան մէջը կը պլպլա» («Թորոս Լեւոնի», էջ 19): «Անոնց լաւ սուրբ է, բայց գէշը սատանայէն ալ վատ է» (նոյն տեղում, էջ 20): «Պէտք է մոռնալ թէ որովայնապարար եւ խաբեբայ եկեղեցականաց քով կան գործունեայ եւ աշխատասէր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը եւ ժողովուրդը կը սիրեն եւ գիտեն նաեւ զիրենք անոնց համար զոհել» (նոյն տեղում, էջ 95-96): «Այդ եզր կաթողիկոսը Թադեւոսէ, Բարդողիմէոսէ, Լուսատուչէ լա՛ւ գիտէ հայութիւնը, քրիստոնէութիւնը. մեղայ աստծու, մենք Լուսատուչայ դաւանութիւնը թողո՞ւմք, որովհետեւ այդ եզր Կողբաց աղեհանք կը սեփականացնէ, աստուած հեղի ընէ, իմքն աղն ուտէ եւ մեզ աղու տայ» («Թէոդորոս Ռշտունի», էջ 605): Ծերենցի վէպերում կան նաեւ համեմատութիւններ, ուր հեղինակը առանց աւելորդութիւնների բացայայտում է արինարբու եւ գիշատիչ Բուդայի հրեշաւոր դիմանկարը: «Այս խօսքերը զրուցելով՝ վագրը աղբայները կը կրնտէր եւ թունաւոր աչքեր կը փայլեցնէր դիմացնին» («Երկունք», էջ 377): «Եւ իր աչքերը այնպէս բոցավառ էին եւ շանթազին, որ Բուդա վագրն անգամ ակամայ սարսուռ մը զգաց, եւ հրամայեց հանել իր երեսէն այդ մարդը՝ բանտ տանիլ եւ կրկին շղթայներով ամրացնել. մահ սպառնալով ամենուն՝ եթէ յանկարծ փախչէր ազատէր» (նոյն տեղում, էջ 378):

Բուդայի վերաբերեալ օգտագործուած համեմատութիւնները շատ բնորոշ եւ դիպուկ են մարդ-գազանի ամբողջ էութիւնը բացայայտելու համար:

Ծերենցը ծնուել էր կաթողիկ ընտանիքում, հայրը յետագայում նրան ուղարկել էր Ս. Ղազար՝ Մխիթարեանների մօտ սովորելու: Հոգեւոր դպրոցի իւրաքանչիւր սան պարտաւոր էր ուսումնասիրել եկեղեցու պատմութիւն, քրիստոնէութեան պատմութիւն, գրաբար, լատիներէն եւ յունարէն լեզուները: Տիրապետող լեզուն գրաբարն էր, Մխիթարեան հայրերը անգիր անել էին տալիս գրաբար ճառեր, ոտանաւորներ, հատուածներ Սուրբ գրքից, նրանք աշակերտներից պահանջում էին խօսել գրաբարով՝ որպէս «աղբիւր բարբառի հայրենական»: Աշակերտների գիտելիքները գնահատում էին նրանով, թէ նրանք ինչպէս են անգիր արտասանում օրուայ եկեղեցական աղօթքներն ու սահուն կարգում որոշ հատուածներ Աստուածաշնչի գլուխներից:

Թէեւ Ծերենցի կեանքը Մխիթարեան վանքում անցել է միապաղաղ. ամէն առաւօտ աշակերտները գնացել են եկեղեցու մատուռը «Հաւատով խոստովանիմ» եւ «Ողջոյն քեզ» աղօթքները արտասանելու, սակայն այնտեղ ստացած եկեղեցական-կրօնական գիտելիքները վառ արտայայտուել են նրա բոլոր վէպերում: Ծերենցը քաջածա-

նօթ էր եկեղեցական բոլոր արարողություններին, աղօթքներին, հոգեւորականներին դիմելու ձեւերին, եկեղեցասէր էր ու աստուածավախ. «Ամենէն ապահով տեղ տեսնուելու համար հայ եկեղեցին կրնայ լինիլ...» («Թորոս Լեւոնի», էջ 31), «Աստուած օգնական, հայր սուրբ», «Աստուած պահապան, որդեակ» (նոյն տեղում, էջ 58), «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց»⁸ (նոյն տեղում, էջ 63): «Յունաց լրբութեան չափը անցաւ ամէն տեղ, ամէն հարստահարութեանց, ամէն բռնութեանց, ամէն նախատանաց ենթակայ եղաւ մեր ազգը. մեր եկեղեցին, մեր խաչն ու աւետարան կը հայհոյեն, չի կրցանք հասկցնել այս ամբարտաւան ազգին թէ խաչ եւ աւետարան միեւնոյն է ամէն քրիստոնեայի համար. տէրն ինք այց ընէ մեր տառապեալ ազգին» (նոյն տեղում, էջ 72), «Ետքը իջան եկեղեցին, «Տէր ուղեւան» ըսին»⁹ (նոյն տեղում, էջ 73), «Փառք քեզ, տէր, փառք քեզ, յաղագս ամենայնի, տէր, փառք քեզ» («Երկունք», էջ 299), «Բարի եկա՛ր, հայր սուրբ, մեր սեղանը օրհնելու» («Թորոս Լեւոնի», 95), «տէրտէրն «ողորմեա» կ'ըսէ, թողութիւն կու տայ» (նոյն տեղում, 114): Մէջբերումներ է արել նաեւ Աստուածաշնչից. «ոչ ազատ կայ եւ ոչ ծառայ՝ այլ ամենայն ոք մի ի Քրիստոս Յիսուս» («Երկունք», էջ 285), կամ «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դոք արարիք զդա այս աւագակաց»¹⁰ (նոյն տեղում, էջ 307), «Խնդրեսցիք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտցիք, բախեցէք եւ բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու եւ որ հայցէ՝ գտանէ եւ որ բախէ՝ բացցի նմա»¹¹ («Թէոդորոս Ռշտունի», էջ 375), «Մի՛ արկանէ՛ք զմարգարիտս ձեր առաջի խոզաց»¹² (նոյն տեղում, էջ 509): Անդրադարձել է մինչեւ անգամ կաթողիկոսի անունը պատարագի ընթացքում յիշատակելու արգելքին (նոյն տեղում, էջ 107), ինչպէս նաեւ Պօղոս՝ «գլխաւոր առաքեալ»-ին եւ Պետրոս՝ ուրացողին:

Ծերենցի լեզուաոճական կարեւոր յատկանիշներից մէկն էլ այն է, որ նա իր ստեղծագործական մտայղացումներով, լեզուական կարողություններով գեղարուեստօրէն վերամարմնաւորել է պատմական դարաշրջանում տեղի ունեցող դէպքերն ու իրադրությունները, ստեղծել բազմաթիւ գեղարուեստական պատկերներ, խօսքի զանազան միջոցներով նկարագրած երեւոյթները հասցրել ընթերցողներին՝ նրանց երեւակայութեան մէջ առաջացնելով պատմականութեան պատրանք: Նրա ստեղծած պատկերները չափազանց հետաքրքիր եւ նպատակասլաց են, դրանք իրենց պատկերացման մէջ իմաստաւորում են բնութագրող դարաշրջանը: Գրողի երկերում կան այնպիսի սրտաճմլիկ պատկերներ, որոնք յուզում են ընթերցողին, արհամարհանքի զգացում առաջացնում նրանց սրտերում օտարերկրեայ նուաճողների եւ երկրի ներքին թշնամիների նկատմամբ: Բերենք մի հատուած Հայաստանի ծանր վիճակը պատկերող նկարագրությունից. «Ինչ անհատնում եւ քաղաքի գերեզմաններ, եւ ինչ բարբարոս եւ սեղանակապուտ ժողովուրդ անցեր էին հոնկից. գերեզման մը չի կար, որու կափարիչը խախտած չլինէր, կային գերեզմանք չորս բարձր սիւներու վրայ հաստատուած, բայց անբարիշտ եւ գերեզմանակրկիտ ձեռքը հոն ալ հասեր էր եւ անագին միակտուր ետէ կանգուն եւ աւելի մեծ կափարիչը խախտեր էր, անիւնն ու ոսկորը ցրուեր էր: Երկայն մղոններ աս տեսարանը կը շարունակուէր» («Թորոս Լեւոնի» էջ 76): Այստեղ, ինչպէս տեսնում ենք, հեղինակը ստեղծել է մի իրական պատկեր՝ մոռալ գոյներով, աւեր ներկայով: Վիպասանը ցնցող պատկերներով ցոյց է տալիս, որ երբեմնի փառքի եւ հզօրութեան Հայաստանն այժմ տառապում է բռնութեան լծի տակ, որ բարբարոսների ասպատակությունների ժամա-

⁸ Նոյնը կրկնել է նաեւ «Երկունք»-ում, էջ 381:

⁹ Համապարհ գնալու աղօթք:

¹⁰ Մարկոս ԺԱ:17:

¹¹ Դուկաս ԺԱ:9:

¹² Մատթէոս Է:6:

նակ ոչ միայն կենդանի ժողովուրդն էր ոչնչանում, այլև գերեզմաններում թաղուած մեռելների կմախքներն իսկ անգամ տրորւում էին թշնամու ձիերի սմբակների տակ եւ ցրւում աշխարհով մէկ:

Գեղարուեստական երկի լեզուաոճական արտայայտչական կարեւոր միջոցներից է փոխաբերութիւնն ու մակդիրը: Ծերենցի վէպերը բաւական հարուստ են բառային այդ պատկերներով: Հեղինակը իր նկարագրած դէպքերն ու դէմքերը պատկերաւոր լեզուով արտայայտելու համար կատարել է բառերի եւ առանձին արտայայտութիւնների ընտրութիւն՝ համապատասխանեցնելով դրանք բնութագրուող դարաշրջանի, գործող անձանց միջավայրին եւ նրանց գործունէութեանը: Որքան դիպուկ եւ ճշմարիտ է օգտագործուած մակդիրը, այնքան աւելի արտայայտիչ եւ տպաւորիչ է այն, այնքան աւելի կոնկրէտ է բնորոշում այս կամ այն առարկան կամ երեւոյթը: Փոխաբերութիւնների եւ մակդիրների լայն օգտագործումը հնարաւորութիւն է տալիս Ծերենցին ստեղծելու կոլորիտ, կենդանութիւն հաղորդել բնութագրուող առարկային, գործողութեանը, նկարագրուող երեւոյթին: Օրինակ՝ «Ո՛հ իմ սէւ լեռան պայծառ արեւ, երբ քու սէւ ժայռերուդ վրայ պիտի կանգնիմ» («Թորոս Լեւոնի», էջ 14): Այս նախադասութեան մէջ «սէւը» օգտագործուած է իբրեւ գեղարուեստական մակդիր: Այստեղ հեղինակը ցանկացել է ցոյց տալ Թորոս իշխանի հոգեկան վիճակը, նրա ապրումներն ու խոհերը, յոյզերն ու մտորումները: Նա երազում էր այն երանելի օրուայ մասին, որ ինքը «բանտէ եւ շղթաներէ» ազատուած պիտի վերադառնար հայրենիք եւ հօր կործանուած փլատակների վրայ պիտի ծածանել տար հայկական դրօշակը: «Իր լուսալիւ աչքերը հրալիւ կը դառնային շանթահարելու համար իր կամաց ընդդիմահարները»: «Հրալից ամպը, որ հակաին վրայ կը դիզուէր»: «Իր սուր միտքը փոխանակ շանթերու՝ թունաւոր նետեր կ'արձակէր» («Թորոս Լեւոնի», էջ 34): Ընդգծուած մակդիրների միջոցով հեղինակը ձգտել է պատկերել Եւփրմէի հոգեկան ներաշխարհում տեղի ունեցող այն ալեկոծութիւնները, որ առաջացել էին Ռուբէնի մահից յետոյ: Նրա «լուսալիւ աչքերը» կրակով էին լցուած եւ կարծես նրանցից իւրաքանչիւրը շանթեր էր արձակում թշնամու սիրտը խոցելու համար: «Խեղճ իշխանը երբեմն աչքը իրեն կը վերցնէր, իբրեւ թէ ողորմութեան փշրանք մը հայցելով նրա նայուածքէն» («Երկունք», 264): Հեղինակը բնութագրում է Անձեւացեաց Մուշեղ իշխանին, որը վիրաւորուած պատերազմի դաշտից վերադառնալուց յետոյ աղերսում էր կնոջը՝ Հեղինէին, գեթ մի քաղցր ժպիտ կամ սիրալիւ հայեացք պարգեւել ամուսնուն, որպէսզի ամոքեր նրա ցաւերը, բայց Հեղինէն անպատասխան է թողնում նրա խնդրանքը: Ծերենցի երկերում օգտագործուած են ածականներով, օրինակ՝ լուսալիւ դէմք, փառահեղ մորուք, նշուլագեղ աչօք, լուսալիւ հայեցումով, կրակէ աչքեր, քաղցր լոյս, պղնձէ էակ, արծուի աչքեր, մագաղաթեայ երեսներ, թունաւոր աչքեր եւ այլն: Հեղինակի վէպերում կան նաեւ բառաբարդումների ձեւով կազմուած բովանդակալից եւ արտայայտիչ մակդիրներ, ահա դրանցից մի քանիսը՝ սայրասուր հայեցումով, քաջակառոյց կազմումով, բոցավառ աչքեր, քաջակորով երիտասարդ, առիւծակորիւն, առիւծաթաթ, առիւծափրօտ, այս բոլոր մակդիրները գրողը օգտագործել է ընդգծելու համար իր հերոսների արտակարգ քաջութիւնն ու հզօրութիւնը: Ծերենցի՝ թէ՛ պարզ ածականներով եւ թէ՛ բառաբարդումների ձեւով կազմուած մակդիրները չափազանց խօսուն են եւ իմաստալից. դրանք միջոց են դառնում բացայայտելու գործող անձանց էութիւնը: Հեղինակը խուսափել է անտեղի ու վերացական մակդիրներ կիրառելուց. նա ամէն կերպ ձգտել է դրանք օգտագործել տեղին՝ ընթերցողի մէջ առաջացնելով բնութագրուող անձի կամ երեւոյթի վերաբերեալ պարզ պատկերացում:

Ծերենցի վէպերում կան նաեւ այնպիսի բառեր եւ արտայայտութիւններ, որոնք գործածուած են ոչ թէ ուղղակի, այլ փոխաբերական իմաստով: Այսպէս՝ «...իմն արեւ է շնորհում» կամ «արեւը խաւարեցուցիք» («Թորոս Լեւոնի», էջ 14) արտայայտութիւնների մէջ «արեւը» առաջին նախադասութեան մէջ գործածուած է ազատութիւն բառի փոխարէն, այսինքն՝ Կոմնենոս կայսրի հրամանով ազատութիւն է շնորհուում Թորոս իշխանին, իսկ երկրորդ նախադասութեան մէջ «արեւը» կիրառուած է աչքեր իմաստով, այսինքն՝ Ռուբէնի աչքերը կուրացնել տալով, կայսրը տանջամահ է անել տալիս նրան: «Առիւծներն ալ իրենց վիժածը ունին» («Թորոս Լեւոնի», էջ 8): Փոխաբերական իմաստով գործածուած այս նախադասութեան միջոցով հեղինակը ցանկացել է բնութագրել Թորոս իշխանին, թէպէտ Կոմնենոսը անողոք վարուեց նրա հօր եւ եղբօր նկատմամբ՝ անժամանակ կեանքից հեռացնելով նրանց, բայց հոգ չէ. Թորոսը, ժառանգելով իր հօր դիւցազնական յատկութիւնները, պիտի շարունակեր նրա հերոսական, անվեհեր գործունէութիւնը: «Ամէն լեզու գեղեցիկ աչի մը կը նմանցնէին զայն, որ հանդարտ եւ լայնաբերան՝ վնիտ ջուր մը կը պոռթկար» (նոյն տեղում, էջ 75): Այստեղ, «լեզուն» եւ «աչի» գործածուած են ոչ թէ իրենց իսկական իմաստով, այլ փոխաբերական, գրողը այդ երկու կարեւոր օրգանները նմանեցնում է գետնից բխող մի աննման աղբիւրի հետ, որից «վճիտ ջուր էր պոռթկում»: «Երկու փայլուն սլաք էին երկաթեայ թափ կ'անցնէին, երբ նկատէին դիմացնին» («Երկունք», էջ 212): «Երկու փայլուն սլաք էին երկաթեայ» ասելով, Ծերենցը նկատի ունի Յովնանին, նրա փայլուն եւ արտայայտիչ աչքերը, նրա հայեացքը այնպէս սուր եւ շեշտակի էր, որ իսկոյն թափանցում էր մարդու հոգու մէջ եւ խոցում նրա սիրտը: Զափազանց բնութագրական եւ տիպական են Յովնանի մասին ասուած արտայայտութիւնները. «երկաթէ մարդ», «երկաթէ կամֆ», «երկաթէ զօրութիւն», «երկաթէ ձեռք», «երկաթէ ջղեր» եւ այլն: Յաճախ կրկնելով «երկաթէ» ածականը՝ հեղինակը ընթերցողի մէջ առանձնակի տրամադրութիւն է ստեղծում՝ նրան տեսնելու իբրեւ ընդհանրապէս զօրեղ մի անձնաւորութեան, որն ունակ էր կատարելու խելայեղ սխրանքներ: Շատ յաճախ Ծերենցի մօտ փոխաբերութիւնները արտայայտիչ են դառնում չափազանցութիւնների միջոցով: Հայրենադաւ իշխանների արարքները դիպուկ բնորոշելու համար վիպասանը դիմել է հետեւեալ չափազանցութեանը. «Կը թողում յիշել մերուծաններ, վասակներ, գոլիմներ, որ ժողովրդեան արեան հեղեղներու եւ գերութեան պատճառ եղած են» («Երկունք», էջ 220): «Ժողովրդեան արեան հեղեղներու» արտայայտութիւնն անելով, հեղինակը ձգտել է բացայայտել ազգադաւ իշխանների վարած ստոր քաղաքականութիւնը, օտար բռնակալները դաւաճանների միջոցով իրագործում էին իրենց ծրագրերը, յաճախակի արշաւանքներ կազմակերպում Հայաստանի վրայ եւ այնպէս բնաջնջում ժողովրդին, որ «Տաւօնոյ երկիրը արեանց լին մ'է եղած», ասում է հեղինակը սրտի անհուն կսկիծով: «Աւելորդ է պատմել, թէ ինչ ըրին Գուրգէն, Յովնան, Խոսրով եւ Աշոտ. իրենց քրտինքը թշնամոյն արիւնին հետ խառնուեցաւ եւ ձիւնապատ երկիրը չորս հարիւրի չափ դիակամբ ծածկուեցաւ եւ կարմիր ներկուեցաւ» («Երկունք», էջ 341): Այս չափազանցութեան միջոցով ընթերցողը ոչ միայն կարողանում է պարզ պատկերացում կազմել հայ քաջորդիների մղած հերոսական կռիւների եւ նրանց տարած յաղթանակների մասին, այլեւ տեսնել, թէ ինչպէս Գուրգէնի, Յովնանի, Խոսրովի եւ Աշոտի ճակատներից հոսող քրտինքի կաթիլները գալիս եւ միախառնուում էին թշնամու թափած արեան հետ եւ ձիւնով պատած դաշտերն ու անտառները կարմիր գոյնով ներկում: «Այդ գեղեցիկ փոփոկ ձեռքը իւր երկու ափերուն մէջ գրկելով՝ արտասուաց հեղեղներով կը լուսնար» («Երկունք», էջ 352): «Դառնեալ արցունքներով իւր աչիերդ պիտի թրջես» (նոյն տեղում, էջ 352): «Աչիերը լին մը դառնած արտասուաց հեղեղներ կ'իջեցնէին»

(նոյն տեղում, 227): «Արտասուք գետերէն աչերէն իջեցնելով» (նոյն տեղում, էջ 255): Այս չափազանցութիւններին դիմելով՝ հեղինակը ցանկացել է բնութագրել Յովնանին, ցոյց տալ նրա հոգու գեղեցկութիւնը, վեհութիւնը, մարդկային բարձր արժանիքները, Վասկանուշի նկատմամբ տածած նրա մաքուր եւ անբիծ զգացմունքները: Ամուր ու կայուն բնաւորութեան տէր այդ մարդը երկար տարիների բաժանումից յետոյ, երբ առաջին անգամ հանդիպում է իր սիրած էակին, սկսում է երեխայի նման արտասուել եւ աչքերից գետի նման հոսող արցունքներով հեղեղել Վասկանուշի ձիւնափայլ մարմինը: Ծերենցի կերպարներում մի անմեկնելի կարօտ, մի վեհացնող թախիծ կայ: Նրանց էութիւնը պարուրուած է լեռնային վճիտ աղբիւրի նման շոյող ու հմայող գեղեցկութեամբ: Նրանց գրաւիչ եւ արտայայտիչ աչքերում նկատելի է սիրոյ խորութիւն: Հեղինակի պատմելաոճն արտաքուստ թւում է, թէ հանգիստ է, խաղաղ, բայց այդ երեւութական անդորրի մէջ բացայայտւում են մարդկային ոգու նորանոր ծալքեր, ցնցող ապրումներ, ողբերգական իրողութիւններ:

Յովնանի եւ Վասկանուշի փոխադարձ սիրոյ ոռոմանթիկ պատկերումը, աւատական հասարակական անարդար օրէնքների հետեւանքով սիրող զոյգերի երջանկութեան խորտակումը պատկերուած են այնպիսի յուզականութեամբ, որ ընթերցողի հոգում կարեկցանք, սէր եւ յոյզ են առաջացնում: Ամէն մի երեւոյթ, մարդկային ամէն մի ողբերգութիւն տանջում է հեղինակի զգայուն հոգին. վիպասանն ապրում է իր հերոսների կեանքով, իր հոգու միջոցով անցկացնում է նրանց վշտերն ու տառապանքները, բացայայտում հերոսների ներաշխարհում տեղի ունեցող փոթորկումներն ու ալեկոծումները, բայց գրողը կերպարներին ուժեղացնելու համար արհեստական կիրք եւ զգացմունք չի ներմուծում նրանց մէջ, սիրոյ անբնական տեսարաններ չի ստեղծում. նրա ստեղծած պատկերների մէջ կայ ազնուացնող եւ վեհացնող մի ոռոմանթիկա:

Ծերենցի ոչ միայն կերտած կերպարներն են հմայիչ, այլեւ բնութեան պատկերները: Պէտք է ասել, որ գրողի երկերում դժուար է գտնել բնութեան ձգձգուած նկարագրութիւններ, ինչպէս այն երբեմն նկատելի է Բաֆֆու ստեղծագործութիւններում: Վիպասանը ոռոմանթիկ գոյներով կենդանացնում է պատմական անցեալը, հինաւուրց բերդերն ու յուշարձանները, աշխարհագրական բոլոր վայրերը, տալով նրա բնական գեղեցկութիւնը, լեռները, դաշտերը, գետերն ու լճերը... եւ այդ բոլորը ոչ ինքնանպատակ, այլ ձուլում է տեղի ունեցող դէպքերի հետ, օրգանապէս կապում միմեանց հետ եւ բնութիւնն ու նրա մէջ ապրող եւ գործող կենդանի էակները մէկը միւսին լրացնում են, ամբողջացնում, ստեղծում մի գեղեցիկ ներդաշնակութիւնը: «Գուրգէնը եւ հոսում իշխանը... երկուք օրը ելան փոքրիկ եւ գեղեցիկ գաւառը շրջագայելու,- գրում է Ծերենցը,- տեսնելու մանր առուակներն ու վտակները, որ երբեմն սիրուն բլրակներէ կ'իջնեն, երբեմն ահաւոր լեռանց պատռուածներէ եւ կ'երթան թորթումի գետը թափելու. տեղ-տեղ թուփեր եւ մայրաց անտառներ, տեղ-տեղ խոտաւետ ձորակներ, որ շարունակ կը փոխուին: Յետոյ ահագին ապառաժներ ումանք կամար-կամար ձեւացեալ, ումանք անոռնի սեպացեալ մէկ կողմէն, եւ միւսէն ծառերու, պարտէզներու եւ մարգագետիններու կանաչութեան սոսկում եւ զուարճութիւն աչաց կը պատճառէին» («Երկունք», էջ 366): Բերենք բնութեան սեղմ նկարագրութիւնից մի հատուած եւս. «Դիոնիսի կարգադրութեամբ մեր հարսն ու փեսան հասարակ նաւակ մը մտած Բաբգէնով, երկու ծառայով եւ մէկ նաժիշտով կ'անցնէին դիմացի Ասիոյ ծովափումը, եւ ծովեզրէն մղոն մը հեռաւորութեամբ անտառախիտ ծառերի շրջապատեալ գիւղական ամալի տուն մը պատրաստ կը գտնէին գիրենք ընդունելու համար. հոն ինչ-որ բնութեան սփանշելի կար, այս երկու գեղեցիկ անձանց ուրախութիւնը կը պսա-

կէր. Բաբգէն իր լեռներուն գառունը կը յիշէր» («Թորոս Լեւոնի», էջ 44): Ինչպէս տեսնում ենք, չափազանց ժլատ բնութեան այս պատկերը հեղինակը յղացել է Թորոսի եւ Եւփիմէի կեանքի երջանիկ օրերը հայրենի գեղատեսիլ բնութեան գրկում ցուցադրելու համար. հայրենի բնաշխարհը կարծես իր անսովոր գեղեցկութեամբ փայլում էր նրանց առաջ, հրապուրանքի զգացում առաջացնում նրանց սրտերում, եւ, որքան մօտենում էին նրանք հայրենի լեռնաշխարհին, այնքան աւելի բնութեան սքանչելի տեսարաններ էին բացւում նրանց առջեւ:

Թէ՛ կերպարներ կերտելիս, թէ՛ բնութիւն նկարագրելիս եւ թէ՛ գեղարուեստական պատկերներ ստեղծելիս հեղինակը կիրառել է լեզուաոճական բազմաթիւ միջոցներ, որոնց մէջ ամենահիմնականը արխայիզմների (իմա՝ հնաբանութիւն) եւ գրաբարի օգտագործումն է: Աշխարհաբար գրական լեզուի զարգացման եւ հարստացման համար Մերենցը հիմնական ակունքներ է համարել երկուսը՝ նախ՝ ժողովրդական հարուստ բառ ու բանը, բարբառները, ապա գրաբարի արդէն «աշխարհաբարացած» եւ «աշխարհաբարացման» ճանապարհին ընկած հարուստ բառապաշարը: «Մերենց իր աշխարհաբարով, որ չունի գրաբարէն փոխանցուած խառնուրդի մը ծանրութիւնը, գրում է Մ. Ճանաշեանը,՝ գրական ու ծաղկեալ լեզու մըն է, հարթ, սահուն, թէեւ քիչ մը նուազ բանաստեղծական շնչով, կը պահէ տակաւին իր թարմութիւնը՝ հետեւաբար իր արժէքը, ունի ճաշակ, չափակցութիւն, զգացում, դատողութիւն եւ երեւակայութիւն, որուն զօրութեամբ կը ստեղծէ գրաւիչ տեսարաններ»¹³:

Ինչպէս տեսնում ենք, Մ. Ճանաշեանը բաւական բարձր կարծիք է յայտնել Մերենցի լեզուի մասին. ընդունելով հանդերձ, որ գրողն ունի «գատելու», «երեւակայելու» եւ գեղարուեստական պատկերներ ստեղծելու մեծ կարողութիւն, այնու ամենայնիւ, չենք կարող համաձայնել գրականագէտի արտայայտած այն մտքին, որ «Մերենցի լեզուն չունի գրաբարէն փոխանցուած խառնուրդի մը ծանրութիւնը»: Մեր բոլոր պատմավիպասաններն իրենց երկերում տուել են մեր դարաւոր լեզուի հարստութիւնը, գեղեցկութիւնը եւ ճկունութիւնը: Դարաշրջանի առաւել հնչեղ պատկերման, կերպարների գործունէութեան առաւել բնորոշ եւ կոլորիտային արտացոլման նպատակով նրանք կիրառել են արխայիզմների եւ գրաբարի տարրեր:

Մերենցը նոյնպէս իր վէպերում գործածել է գրաբարեան բառեր, դարձուածքներ, արխայիզմներ: Բայց Մերենցի երկերը, աւելի քան որեւէ մի այլ պատմավիպասանի ստեղծագործութիւններ, խաթարուած են գրաբարեան ոճական բազմաթիւ արտայայտութիւններով, գրաբարեան հոլովման եւ խոնարհման բազում ձեւերով, հնացած, վաղուց արդէն գործածութիւնից դուրս ընկած բառերով, որոնց անհարկի օգտագործումը չէր կարող բացասաբար չանդրադառնալ վիպասանի լեզուի վրայ: Ճիշդ է՝ գրողի վէպերում կան գրաբարեան այնպիսի բառեր ու արտայայտութիւններ, որոնք էական նշանակութիւն ունենալու հետ միասին ունեն նաեւ նշանակալից իմաստ՝ ընթերցողի երեւակայութեան մէջ պատմականութեան պատրանք առաջացնելու առումով, բայց եւ այնպէս վիպասանի երկերում այնքան շատ են անհարկի գործածուած գրաբար բառերն ու ոճական արտայայտութիւնները, պատմիչների երկերից թափանցուած ամբողջական հատուածներն ու նախադասութիւնները, որ իջեցնում են գրողի պատմական երկերի լեզուական արժէքը. աւելին՝ ընթերցող լայն շրջանների համար նրա վէպերը դառնում են դժուարընթեռնելի եւ դժուարամարս: Այսպէս, օրինակ, արդի ընթերցող հասարակութեան համար անհասկանալի են հետեւեալ գրաբարեան բառերը՝

¹³ Մ. Ճանաշեան, «Պատմութիւն արդի հայ գրականութեան», հ. 1, Վեներիկ, տպ. Մխիթարեան, 1953, էջ 260:

կենօք, զկերողս, նապաղեաց, ընդոստուցեալ, կահմանց, առնուր, պշուցեալ, պերնացեալ, պար առեալ, խելաբրել, նառատամք, նկում, հափափեալ, փաղանք, սկրդել, աչագրաւ, սակի, աւշտել, հանձանձիշ, ստերդուն եւ այլ շատ բառեր: Ինչպէս գիտենք, աշխարհաբարի հոլովման եւ խոնարհման համակարգը բոլորովին տարբեր է գրաբարից, եւ եթէ հեղինակն իր երկերում կիրառել է այդպիսի ձեւեր, ուրեմն նա հակասել է գրական լեզուի քերականական օրինաչափութիւններին: Ծերենցի երկերում առկայ են բազմաթիւ գրաբարեան հոլովման եւ խոնարհման ձեւեր: Հեղինակի օգտագործած քերականական ձեւերի մեծ մասը -f վերջաւորութեամբ կազմուած բառեր են: Այսպէս, օրինակ, յարգապատիւք, ամենապայծառք, ամենակատարեալք, ամենաազնուականք, անդամք, ակնածողք, խոստմունք, նախատանօք, նախարարք, ոչխարօք, արջառօք, ցորենօք, ընծայիք, պաշտօնեայք, անապատականք, փխտոնեայք:

Ծերենցը զգալի չափով գործածել է նաեւ գրաբարի սեռական հոլովաձեւեր՝ թէ՛ եղակի եւ թէ՛ յոգնակի թուով, ինչպէս, օրինակ, գեղեցկութեանք, կատարելութեանք, արտասուաց, կանոնաց, մտաց, ծննդոց, ապականութեանք, մեծամեծաց, արեանք, զօրաց, հիմանք, շրթանք, շարագործաց, միամտաց, հրեշտակաց եւ այլն: Բաւական շատ են Ծերենցի երկերում կիրառուած գրաբարի խոնարհման բայաձեւերը, մասնաւորապէս անցեալ կատարեալ ժամանակով արտայայտուած ձեւերը, ինչպէս, օրինակ, համարձակեցաւ, պատերազմեցաւ, ցրուեցան, շրջագայեցաւ, հարսնացաւ, յարձակեցաւ, յուսահատեցաւ, հնազանդեցաւ, ժպտեցաւ, արթնացաւ եւ այլն:

Այս բոլորին զուգընթաց՝ Ծերենցի վէպերում հանդիպում են գրաբարով արտայայտուած ամբողջական նախադասութիւններ, որոնք գեղարուեստական մշակման եւ ընդհանրացման չեն ենթարկուած: Այս երեւոյթը նոյնպէս բացասաբար է անդրադարձել գրողի լեզուի վրայ, քանի որ գրաբարով արտայայտուած նախադասութիւնները չեն ներդաշնակուել գրողի բանաստեղծական ճաշակին եւ մասնաւորապէս նրա լեզւական մշակոյթին: Այսպէս. «Ի՞նչ ըրին հայ նախարարք, մենք չենք ուզեր դատել, այլ ահա մէջտեղ կը դնենք ժամանակակից պատմագրի խօսքերը»,- ասում է հեղինակը: «Իսկ իշխանք հայոց որ ի Յունաց եւ ի Տանկաց կողմանէ, Համազասպ եւ Մուշեղ, եւ այլք ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր եւ արիւնահեղութիւն, եւ անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմեռայնայն, զի եւ զշինականս ապրեցուցանեն: Քանզի Ռշտունեաց Տէրն անկաւ Աղթամար կղզին» («Թորոս Ռշտունի», էջ 635): Կամ մի այլ նախադասութիւն. «Ես աստ էր տեսնել զաղէտս տարակուսի, զօրէն հիւանդաց յորժամ տագնապեսցին ցան եւ հատանիցէ ի խօսից, այնպէս ինչ եղեն, զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի եւ թագստեան եւ ոչ խնայել ի ներհուստ, այլ որպէս ոք չի անկցի ի ծով՝ եւ ոչ կարիցէ գտանել» (նոյն տեղում, էջ 636): Մատթէոս Ուռհայեցուց մէջբերում է. «... նոցա շատ անիրաւութիւններ կ'ուզէի գրել, բայց չի համարձակեցայ, վասնզի նոցա իշխանութեան ներքեւ էինք» («Թորոս Լեւոնի», էջ 147):

Ընդհանրացնելով կարելի է ասել՝ Ծերենցի խօսքարուեստի քննութեամբ պարզել ենք, որ նրա ոճի ամենաբնորոշ յատկանիշը հնաբանութիւնն է:

ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ